**Հավելված 4**
**«ՀՀ ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-2018/2» ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-2018/2-2

ք.Երևան ____/____________/2018թ.

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն-ը ի դեմս Անի Բաղդասարյան-ի, որը գործում է ՀՀ պետական վերահսկողական ծառայություն -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ը, ի դեմս տնօրեն Արման Կադալյան-ի, որը գործում է ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ` պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ` ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի`**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք`

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու

պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,
2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
**2.2 Գնորդը պարտավոր է՝**
2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։
**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**
2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։
2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։
**2.4 Վաճառողը պարտավոր է՝**
2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։
2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 155530.00 (հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր երեսուն ) ՀՀ դրամ ։ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը,

պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է

նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ։

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը։

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար։

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով։

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով

այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[1]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ պետական վերահսկողական ծառայություն**

**Հասցե` Անտառային 188 շենք**

**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

**900011020550**

**00183253**

**Անի Բաղդասարյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Signature Not Verified

BAGHDASARYAN ANI 7504910546

Digitally signed by BAGHDASARYAN ANI 7504910546
Date: 2018.11.08 14:19:34 AMT

**ՎԱՃԱՌՈՂ**

**ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ**

**Հասցե` ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10**

**«Ամերիաբանկ» ՓԲԸ**

**1570032132510100**

**81832425**

**Արման Կադալյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by KADALYAN ARMAN 3512850227
Date: 2018.11.06 21:21:12 AMT

Հավելված N 1
____/____________/2018թ. կնքված
ՀՀ ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 2 | 30199420/3 | թուղթ նշումների համար, սոսնձվածքով JINXIN | JINXIN | Նշումների և գրառումների համար դեղին գույնի, չափածրարված տուփերով, | հատ | 198.75 | 15900.00 | 80 | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 80 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տուփում 100 հատ, 76x127մմ չափի կպչուն թերթիկներ: Կցված է a5cb90cc.pdf | | | | | | | բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 5 | 30192710/3 | սոսնձամատիտ, գրասենյակային YALONG | YALONG | Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), չափագրված 25 գր., կափարիչով, ներքևի մասում պտտվող պարուրակ, որը հնարավորություն է ստեղծում չոր սոսինձը վերև բարձրացնելու, | հատ | 198.00 | 9900.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 50 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | թուղթ սոսնձելու համար: Կցված է [9e173797.pdf](9e173797.pdf) | | | | | | | |
| 7 | 30192128/3 | գրիչ գելային Classic | Classic | Գելային, գույնը կապույտ, միջուկի երկարությունը 12 սմ, ծայրի հաստությունը 0.5 մմ, իրանը պլաստիկից, ծայրի մասում կափարիչով: Կցված է [ffb543e0.pdf](ffb543e0.pdf) | հատ | 476.00 | 11900.00 | 25 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 25 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 8 | 30192130/4 | մատիտներ ATLAS | ATLAS | Մատիտ HB ջնջիչով, բարձր որակի սև գրաֆիտո | հատ | 59.80 | 2990.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 50 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վ, կարծր փայտային պատյանով, սրված, վեցանկյուն, նախատեսված՝ գրելու և նկարելու համար: Կցված է 7ecc3f54.pdf | | | | | | | օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 9 | 30192160/3 | շտրիխներ COMXIN | COMXIN | Ինքնահոս գնդիկավոր, գույնը՝ սպիտակ, 1.2մմ ծածկողականություն, գրված թանաքի և տպված անճշտությունը ջնջելու համար: Կցված է fad2f23e.pdf | հատ | 149.00 | 7450.00 | 50 | հասցեն<br>ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | ենթակա քանակը<br>50 | Ժամկետը<br>Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 30192720/4 | գծանշիչ YALONG | YALONG | Տարբեր գույների գծանիշ նախատեսված ընդգծելու և նշումներ կատարելու համար, ծակոտկեն նյութերից, փափուկ ծայրով , պլաստմասսե կմախքով և փակովի կափարիչով, երկարատև օգտագործելու համար: Կցված է [f58d2642.pdf](f58d2642.pdf) | հատ | 198.00 | 9900.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 50 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 12 | 30197100/4 | կարիչի մետաղալարե կապեր, | DOLPHIN | Գրասենյակային կարիչների | տուփ | 158.00 | 7900.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, | 50 | Պայմանագի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մեծ DOLPHIN | | մետաղալ արե կապեր բլոկներով ` 24 մմ/6 մմ տուփ/1 000հատ : Կցված է 3a0a6d35.pdf | | | | | Անտառայ ին փողոց, 188 շենք | | ըը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցայի ն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 13 | 30197111/3 | կարիչի մե տաղալար ե կապեր, փոքր KANGARO | KANGARO | Գրասենյա կային կարիչների մետաղալ արե կապեր բլոկներով ` 10 մմ/6 մմ, տուփ/1000 հատ: Կցված է 68089987.pdf | տուփ | 99.80 | 4990.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառայ ին փողոց, 188 շենք | 50 | Պայմանագի ըը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցայի ն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 14 | 30197321/3 | կարիչ, մինչ— 20 թերթի համար DL | DL | Գրասենյա կային կարիչ մետաղյա, | հատ | 590.00 | 5900.00 | 10 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառայ | 10 | Պայմանագի ըը կնքելու |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մինչև 20 թերթ մետաղական կապերով ամրացնել ու համար: Կցված է [2bf945be.pdf](2bf945be.pdf) | | | | | ին փողոց, 188 շենք | | օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 15 | 30197322/4 | կարիչ, 20-50 թերթի համար DL | DL | Գրասենյակային կարիչ մետաղյա, մինչև 20-50 թերթ մետաղական կապերով ամրացնել ու համար: Կցված է [619e34a7.pdf](619e34a7.pdf) | հատ | 1199.00 | 11990.00 | 10 | հասցեն<br>ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | ենթակա քանակը<br>10 | Ժամկետը<br>Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 17 | 30197332/3 | դակիչ միջին DL | DL | Ծակոտիչ գրասենյակային` մինչև 30 թերթ | հատ | 1990.00 | 19900.00 | 10 | հասցեն<br>ք. Երևան, Անտառային փողոց, | ենթակա քանակը<br>10 | Ժամկետը<br>Պայմանագիրը կնքելու օրվանից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | դակելու համար: Կցված է [c309b95d.pdf](c309b95d.pdf) | | | | | 188 շենք | | հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 21 | 39241141/3 | դանակ՝ զրասենյակային ROBY | ROBY | Մետաղյա մեխանիկական դանակ, երեսպատված պլաստմասսե հիմքով, դանակը 2 արժական, փոխարինելու հնարավորությամբ, չափը դանակի 12 սմ, լայնությունը 2 սմ: Կցված է [4f4ec4f3.p](4f4ec4f3.p) | հատ | 159.33 | 2390.00 | 15 | հասցեն<br>ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | ենթակա քանակը<br>15 | Ժամկետը<br>Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | df | | | | | | | | |
| 22 | 39263520/3 | սեղմակ, միջին DIAMOND | DIAMOND | Գրասենյակային սեղմակ մետաղական 32մմ լայնությամբ: Կցված է a5f8af66.pdf | հատ | 55.80 | 2790.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը | |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 50 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը | |
| 23 | 39263530/3 | սեղմակ, մեծ DL | DL | Գրասենյակային սեղմակ մետաղական 51մմ լայնությամբ: Կցված է e530ceda.pdf | հատ | 75.80 | 3790.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը | |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 50 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 39263510/4 | սեղմակ, փոքր DIAMOND | DIAMOND | Գրասենյա կային սեղմակ մե տաղական 12մմ լայնո ւթյամբ: Կցված է 84b97afd.pdf | հատ | 29.80 | 1490.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառայ ին փողոց, 188 շենք | 50 | Պայմանագի րը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցայի ն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 25 | 22811150/3 | նոթատետ րեր SINARLINE | SINARLINE | Գրառումն երի նոթա տետր 50 թերթանի, 128*203 մմ չափի,մ իատող սպիտակ, քաշը 90 գրամ: Կցված է 1fffca79.pdf | հատ | 172.50 | 6900.00 | 40 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառայ ին փողոց, 188 շենք | 40 | Պայմանագի րը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցայի ն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 32 | 39241210/ | մկրատ, գր | SKISSORS | Իրանը պլ | հատ | 277.50 | 5550.00 | 20 | հասցեն | ենթակա | Ժամկետը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 3 | ասենյակային SKISSORS | | աստմասե, մետաղյա ծայրամասով, 15սմ երկարությամբ: Կցված է [3c5b5b75.pdf]() | | | | | | քանակը | |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 20 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |
| 33 | 39263400/3 | ամրակ, միջին YALONG | YALONG | Մետաղական, 33 մմ երկարությամբ: Թղթի դարսը` լիարժեք ամրությամբ, միաժամանակ պահելու կարողությամբ, մեկ տուփի մեջ 100 հատ: Կցված է [28e1f813.p]() | տուփ | 298.75 | 23900.00 | 80 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| | | | | | | | | | ք. Երևան, Անտառային փողոց, 188 շենք | 80 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 21 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018 թ.-ի դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | df | | | | | |

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| **ՀՀ պետական վերահսկողական ծառայություն** | **ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ** |
| **Հասցե՝ Անտառային 188 շենք** | **Հասցե՝ ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **«Ամերիաբանկ» ՓԲԸ** |
| **900011020550** | **1570032132510100** |
| **00183253** | **81832425** |
| **Անի Բաղդասարյան** | **Արման Կադալյան** |
| **____________** | **____________** |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Signature Not Verified

BAGHDASARYAN ANI 7504910546

Digitally signed by BAGHDASARYAN ANI 7504910546
Date: 2018.11.08 14:20:02 AMT

Digitally signed by KADALYAN ARMAN 3512850227
Date: 2018.11.06 21:22:35 AMT

Հավելված N 2
____/____________/2018թ. կնքված
ՀՀ ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 2 | 30199420/3 | թուղթ նշումների համար, սոսնձվածքով | | | | | | | | | | 15900.00 | 15900.00 | 15900.00 | 15900.00 |
| 5 | 30192710/3 | սոսնձամատիտ, գրասենյակային | | | | | | | | | | 9900.00 | 9900.00 | 9900.00 | 9900.00 |
| 7 | 30192128/3 | գրիչ գելային | | | | | | | | | | 11900.00 | 11900.00 | 11900.00 | 11900.00 |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 30192130/4 | մատիտներ | | | | | | | | | | | 2990.00 | 2990.00 | 2990.00 | 2990.00 |
| 9 | 30192160/3 | շտրիխներ | | | | | | | | | | | 7450.00 | 7450.00 | 7450.00 | 7450.00 |
| 10 | 30192720/4 | գծանշիչ | | | | | | | | | | | 9900.00 | 9900.00 | 9900.00 | 9900.00 |
| 12 | 30197100/4 | կարիչի մետաղալարե կապեր, մեծ | | | | | | | | | | | 7900.00 | 7900.00 | 7900.00 | 7900.00 |
| 13 | 30197111/3 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր | | | | | | | | | | | 4990.00 | 4990.00 | 4990.00 | 4990.00 |
| 14 | 30197321/3 | կարիչ, մինչ— 20 թերթի համար | | | | | | | | | | | 5900.00 | 5900.00 | 5900.00 | 5900.00 |
| 15 | 30197322/4 | կարիչ, 20-50 թերթի համար | | | | | | | | | | | 11990.00 | 11990.00 | 11990.00 | 11990.00 |
| 17 | 30197332/3 | դակիչ միջին | | | | | | | | | | | 19900.00 | 19900.00 | 19900.00 | 19900.00 |
| 21 | 39241141/3 | դանակ՝ գրասենյակային | | | | | | | | | | | 2390.00 | 2390.00 | 2390.00 | 2390.00 |
| 22 | 39263520/3 | սեղմակ, միջին | | | | | | | | | | | 2790.00 | 2790.00 | 2790.00 | 2790.00 |
| 23 | 39263530/3 | սեղմակ, մեծ | | | | | | | | | | | 3790.00 | 3790.00 | 3790.00 | 3790.00 |
| 24 | 39263510/4 | սեղմակ, | | | | | | | | | | | 1490.0 | 1490.0 | 1490.0 | 1490.0 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փոքր | | | | | | | | | | 0 | 0 | 0 | 0 |
| 25 | 22811150/3 | նոթատետրեր | | | | | | | | | | 6900.00 | 6900.00 | 6900.00 | 6900.00 |
| 32 | 39241210/3 | մկրատ, գրասենյակային | | | | | | | | | | 5550.00 | 5550.00 | 5550.00 | 5550.00 |
| 33 | 39263400/3 | ամրակ, միջին | | | | | | | | | | 23900.00 | 23900.00 | 23900.00 | 23900.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ պետական վերահսկողական ծառայություն**

**Հասցե` Անտառային 188 շենք**

**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

**900011020550**

**00183253**

**Անի Բաղդասարյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ**

**Հասցե` ք. Երևան, Ավանեսովի 26 փ. 10**

**«Ամերիաբանկ» ՓԲԸ**

**1570032132510100**

**81832425**

**Արման Կադալյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Signature Not Verified

BAGHDASARYAN ANI 7504910546

Digitally signed by BAGHDASARYAN ANI 7504910546

Digitally signed by KADALYAN ARMAN 3512850227
Date: 2018.11.06 21:23:12 AMT

Հավելված N 3
____/___________/2018թ. կնքված
ՀՀ ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ___________________________ | ___________________________ |
| ___________________________ | ___________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________ | հհ ______________ |
| հվհհ ______________ | հվհհ ______________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 2 | թուղթ նշումների համար, ս | Նշումների և գրառումների | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ունձվածքով | համար դեղին գույնի, չափածրարված տուփերով, տուփում 100 հատ, 76x127մմ չափի կպչուն թերթիկներ:(Կցված է a5cb90cc.pdf) | | | | | | | |
| 5 | սոսնձամատիտ, գրասենյակային | Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), չափագրված 25 գր., կափարիչով, ներքևի մասում պտտվող պարուրակ, որը հնարավորություն է ստեղծում չոր սոսինձը վերև բարձրացնելու, թուղթ սոսնձելու համար:(Կցված է 9e173797.pdf) | | | | | | | |
| 7 | գրիչ | Գելային, | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գելային | գույնը կապույտ, միջուկի երկարությունը 12 սմ, ծայրի հաստությունը 0.5 մմ, իրանը պլաստիկից, ծայրի մասում կափարիչով:(Կցված է ffb543e0.pdf) | | | | | | | |
| 8 | մատիտներ | Մատիտ HB ջնջիչով, բարձր որակի սև գրաֆիտով, կարծր փայտային պատյանով, սրված, վեցանկյունն, նախատեսված՝ գրելու և նկարելու համար:(Կցված է 7ecc3f54.pdf) | | | | | | | |
| 9 | շտրիխներ | Ինքնահոսգնդիկավոր, գույնը՝ սպիտակ, 1.2մմ ծածկողական | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ություն, գրված թանաքի և տպված անճշտությունը ջնջելու համար:(Կցված է fad2f23e.pdf) | | | | | | |
| 10 | գծանշիչ | Տարբեր գույների գծանիշ և ախատեսված ընդգծելու և նշումներ կատարելու համար, ծակոտկեն նյութերից, փափուկ ծայրով , պլաստմասսե կմախքով և փակովի կափարիչով, երկարատև օգտագործելու համար:(Կցված է f58d2642.pdf) | | | | | | |
| 12 | կարիչի մետաղալարե կապեր, մեծ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բլոկներով` 24 մմ/6 մմ տուփ/1000հատ:(Կցված է 3a0a6d35.pdf) | | | | | | | |
| 13 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով` 10 մմ/6 մմ, տուփ/1000 հատ:(Կցված է 68089987.pdf) | | | | | | | |
| 14 | կարիչ, մինչ— 20 թերթի համար | Գրասենյակային կարիչ մետաղյա, մինչև 20 թերթ մետաղական կապերով ամրացնելու համար:(Կցված է 2bf945be.pdf) | | | | | | | |
| 15 | կարիչ, 20-50 թերթի համար | Գրասենյակային կարիչ մետաղյա, մինչև 20-50 թերթ մետաղական կապերով ամրացնելու համար: | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | (Կցված է 619e34a7.pdf) | | | | | | | |
| 17 | դակիչ միջին | Ծակոտիչ գրասենյակային՝ մինչև 30 թերթ դակելու համար:(Կցված է c309b95d.pdf) | | | | | | | |
| 21 | դանակ՝ գրասենյակային | Մետաղյա մեխանիկական դանակ, երեսպատված պլաստմասսե հիմքով, դանակը 2 արժական, փոխարինելու հնարավորությամբ, չափը դանակի 12 սմ, լայնությունը 2 սմ:(Կցված է 4f4ec4f3.pdf) | | | | | | | |
| 22 | սեղմակ, միջին | Գրասենյակային սեղմակ մետաղական 32մմ լայնությամբ:(Կցված | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | է a5f8af66.pdf) | | | | | | |
| 23 | սեղմակ, մեծ | Գրասենյակային սեղմակ մետաղական 51մմ լայնությամբ:(Կցված է e530ceda.pdf) | | | | | | |
| 24 | սեղմակ, փոքր | Գրասենյակային սեղմակ մետաղական 12մմ լայնությամբ:(Կցված է 84b97afd.pdf) | | | | | | |
| 25 | Նոթատետրեր | Գրառումների նոթատետր 50 թերթանի, 128*203 մմ չափի,միատող սպիտակ, քաշը 90 գրամ:(Կցված է 1fffca79.pdf) | | | | | | |
| 32 | մկրատ, գրասենյակային | Իրանը պլաստմասե, մետաղյա ծայրամասով, 15սմ երկարությ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ամբ:(Կցվ ած է 3c5b5b75.pdf) | | | | | | |
| 33 | ամրակ, միջին | Մետաղական, 33 մմ երկարության ամբ: Թղթի դարսը` լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողության ամբ, մեկ տուփի մեջ 100 հատ:(Կցված է 28e1f813.pdf) | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ___________________________ | ___________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___________________________ | ___________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 3.1
____/____________/2018թ. կնքված
ՀՀ ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայություն -ի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ.______________________________ -ին կնքված N________________________________ պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _________________________-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| թուղթ նշումների համար, սոսնձվածքով | հատ | |
| սոսնձամատիտ, գրասենյակային | հատ | |
| գրիչ գելային | հատ | |
| մատիտներ | հատ | |
| շտրիխներ | հատ | |
| գծանշիչ | հատ | |
| կարիչի մետաղալարե կապեր, մեծ | տուփ | |
| կարիչի մետաղալարե կապեր, փոքր | տուփ | |
| կարիչ, մինչ— 20 թերթի համար | հատ | |
| կարիչ, 20-50 թերթի համար | հատ | |
| դակիչ միջին | հատ | |
| դանակ՝ գրասենյակային | հատ | |
| սեղմակ, միջին | հատ | |
| սեղմակ, մեծ | հատ | |
| սեղմակ, փոքր | հատ | |
| նոթատետրեր | հատ | |
| մկրատ, գրասենյակային | հատ | |
| ամրակ, միջին | տուփ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական

օրինակ:

## ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
| --- | --- |
| | հայտը նախագծած ներկայացուցիչ` |
| ______________________________ | ______________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ______________________________ | ______________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |